ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/125

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ
Բողոք բերող՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ
Երրորդ անձ՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին

Մասնակցությամբ՝
«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Պետրոսյանի,
Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ներկայացուցիչ՝ Դ. Դավթյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցում, սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի կարիքների համար՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պահնորդական ծառայություններ) ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն)

կողմից 16.12.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը, պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 16.12.2020թ.-ին:

17.12.2020թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/125 համարի ծածկագիրը:

24.12.2020թ.–ին՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

24.12.2020թ.-ին, 29.12.2020թ.-ին, 12.01.2021թ.-ին և 15.01.2021թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 12.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.01.2021թ.-ին:

2. «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 16.12.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Վարչապետի աշխատակազմի (Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի) (այսուհետ՝ Պատվիրատու) 09/12/2020 թվականին ժամը 17:47 հայտարարել է «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իր կարիքների համար մասնագիտացված կազմակերպությունների կողմից

մատուցվող (պահնորդական) ծառայությունների ձեռքբերման նպատակով: Հիմք՝ Պատվիրատուի 10/12/2020 թվականի ժամը 15:29 հայտարարությունը:

Գնման Ընթացակարգի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ»-ի 6-րդ կետը շարադրված է՝ «ք. Երևան, Կոմիտասի 49/2 շենքի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1842.7 քմ:

Անհրաժեշտ է իրականացնել շուրջօրյա պահնորդական ծառայություն առանց հանգստյան և տոնական օրերի:.....

ք. Երևան, Կոմիտասի 49/2 շենքի տարածքի անվտանգության ծառայությունը պետք է իրականացվի 24 ժամյա ռեժիմով առնվազն 1 պահնորդի ներկայությունը պարտադիր է, ընդ որում՝

Իրականացնել հերթապահություն /ներառյալ տեսահսկման և համակարգերի միջոցով/,

- *իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն,*
- *կանխել նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը,*
- *արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն):*
- *արգելել կողմնակի անձանց մուտքը,*
- *այցելուներին տրամադրել մեկանգամյա անցագրային թերթիկներ՝ ընդունողի բանաբանավոր թույլտվությամբ,*
- *մուտքը թույլատրել աշխատակիցների և ունկնդիրների համար կազմված անվանացուցակով,*
- *իրականացնել Պատվիրատուի կողմից սահմանված այլ անվտանգության և պահակային կանոններ,»*

1.2. Պահնորդական ծառայությունները կարգավորվում են «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ Օրենքով և օրենքով Պահնորդական գործունեություն իրականացնող լիցենզավորված կազմակերպությունը՝ Կատարողը, համաձայն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի Թիկնապահական և պահնորդական գործունեության իրականացումը

2) սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ և շարժական գույքի, տարածքի պահպանությունը.

3) պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը.

նման գործառույթները պետք է իրականացնի Կոմիտասի 49/2 շենքի տարածքում գործունեություն իրականացնող մեկ այլ պետական կազմակերպության համար, որի վերաբերյալ տեխնիկական բնութագրի մեջ չկա ոչ մի նշում կամ գրառում:

1.3. Կատարողը, Կոմիտասի 49/2 շենքի տարածքում գործունեություն իրականացնող՝ պայմանագրի կողմ չհանդիսացող, մեկ այլ պետական կազմակերպության համար, իրավունք չունենալով կամ չկարողանալով կազմակերպել տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը՝ պարտավորությունը, չկարողանալով կատարել տվյալ կազմակերպության պահանջը կենթարկվի համապատասխան պատասխանատվության, այսինքն Գնման առարկայի հատկանիշները բավարար ճշտությամբ սահմանված չեն որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Բողոքի փաստական և իրավական հիմնավորումները.

Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ Գնման առարկայի բնութագրերը

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և ՀՀ գործող նորմատիվատեխնիկական ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի Գնումների ընթացակարգի կասեցումը

1. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մանելու օր:

2. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն մասով նախատեսված որոշումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հողվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գնման առարկայի հատկանիշները բավարար ճշտությամբ սահմանված չեն որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, հնարավորություն չի տալիս մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան: Ուստի նաև նման խախտմամբ կնքվելիք պայմանագրից զերծ մնալը Մասնակցին տրված իրավունքն է:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը, պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը:

Ընկերությունը 29.12.2020թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացված դիրքորոշումը ԳԲՔԱ-ԼՕ-2020/125 ծածկագրով բողոքի դիրքորոշման մեջ ներառված է այն խնդիրը, որը ներկայացվել է բողոքում, այն է Պատվիրատուի Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հասցեում ք. Երևան, Կոմիտասի 49/2 շենքի տարածքի Պահնորդական ծառայությունը 2-րդ և 3-րդ հարկերում գործող պայմանագրի կողմ չհանդիսացող կազմակերպությունների համար չի կարող իրականացնել տեխնիկական բնութագրով սահմանված պահանջները, այն է՝

1. պայմանագրի կողմ չհանդիսացող կազմակերպության համար սահմանված չի անցումային և ներօբյեկտային կարգերի իրականացումը, տվյալ դեպքում այցելուների մուտքի ելքի թույլտվությունը, վերջիններիս ընդունող անձի կողմից գրավոր թույլտվությունը կամ դիմավորելը կամ տվյալ այցելուի շարժը պահպանվող տարածքում՝ որը կդիտվի թույլտվություն չստացած անձի ապօրինի մուտք պահպանվող տարածք.

2. պայմանագրի կողմ չհանդիսացող կազմակերպության համար սահմանված չի ապրանքների և նյութական արժեքների դուրս բերումը պահպանվող տարածքից, տվյալ դեպքում չգրանցված կամ համապատասխան թույլտվություն չստացած անձի կողմից ապրանքների և նյութական արժեքների դուրս բերումը կդիտվի պահպանության իրականացնող պահնորդի կողմից պարտականությունների անբարեխիղճ կամ անփույթ կատարում, որին հանձնարարված է գույքի պահպանությունը կամ պաշտպանությունը, ուստի ՀՀ Քրեական օրենսգրքի 186.1 հոդվածով Գույքի պահպանության պարտականություններն անփույթ կամ անբարեխիղճ կատարելը.

1. Իր պարտականություններն անբարեխիղճ կամ անփույթ կատարելն այն անձի կողմից, որին հանձնարարված է գույքի պահպանությունը կամ պաշտպանությունը, եթե դրա հետևանքով տեղի է ունեցել այդ գույքի խոշոր չափերի հասնող (Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարի (արժեքի)) հափշտակում, վնասում կամ կորուստ, եթե չկան պաշտոնեական հանցագործության հատկանիշներ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով: կենթարկվեն պատասխանատվության:

3. տեխնիկական բնութագրով հստակ սահմանված է, որ Կատարողը պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով հասցվել է Պատվիրատուին:

Այս բոլոր պայմանները պարտադիր են, ներառված են պայմանագրի գնի մեջ և իրականացվում են Կատարողի կողմից, հետևաբար 1-ին և 2-րդ կետերում նշված գործառույթները պահնորդների կողմից չիրականացնելու պատճառով Կատարողը՝ կազմակերպությունը կենթարկվի պատասխանատվության:

Վերը նշված փաստարկները բանավոր կերպով ներկայացվել է նաև 29.12.2020թ.-ի ժամը 14:00-ին ԳԲՔԱ-Լ.Օ-2020/125 ծածկագրով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի կողմից նշանակված նիստում, ոպտի կրկին անգամ պնդում եմ, որ առկա է անհրաժեշտություն «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/1-» ծածկագրով պահնորդական ծառայություն-ների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի մեջ կատարելու համապատասխան փոփոխություններ:»:

3. <u>ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/18875-2020 գրությամբ դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 16.12.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 22.12.2020թ.-ին թիվ 02/18.6/53701-2020 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր ս.թ. դեկտեմբերի 17-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/18875-2020 գրությամբ ներկայացված «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ի 16.12.2020թ. բողոքի (այսուհետ՝ Բողոք) վերաբերյալ վարչապետի աշխատակազմը հայտնում է հետևյալ դիրքորոշումը.

ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1681-Ն որոշման 3-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ Երևան քաղաքի Կոմիտասի 49/2 հասցեում գտնվող մասնաշենքի 1-ին հարկի 233.4 քառ. մետր և 4-րդ ու 5-րդ հարկերի 1609.3 քառ. մետր մակերես ունեցող տարածքներն ամրացվել են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը:

«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագրի» համաձայն՝ պահնորդական ծառայությունները պետք է իրականացվեն ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեով գտնվող շենքի 1842.7 քմ մակերեսով տարածքում.

«Ք.Երևան, Կոմիտասի 49/2 շենքի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1842.7 քմ:

«Անհրաժեշտ է իրականացնել շուրջօրյա պահնորդական ծառայություն առանց հանգստյան և տոնական օրերի: Աշխատակիցները պետք է ունենան ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորում և ապահովված լինեն ծառայությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով: Պահպանության ենթակա պահակակետի աշխատակիցները (Պահնորդները) պետք է ապահովված լինեն հետևյալ միջոցներով՝ ձեռքի դյուրակիր լապտեր, դեղատուփ, ռետինե մահակ, մետաղական ձեռնաշղթա, որոնց համար պետք է անցած լինեն համապատասխան դասընթացներ և ունենան վկայական: Կատարող ընկերությունը պարտավորվում է պահպանության ենթակա բոլոր պահնորդներին ապահովել համապատասխան արտահագուստով (ամառ, աշուն-ձմեռ), որոնց վրա առկա է իր տարբերանշանը:

Ք. Երևան, Կոմիտասի 49/2 շենքի տարածքի անվտանգության ծառայությունը պետք է իրականացվի 24 ժամյա ռեժիմով, առնվազն 1 պահնորդի ներկայությունը պարտադիր է, ընդ որում՝

Իրականացնել հերթապահություն /ներառյալ տեսահսկման և համակարգերի միջոցով/,

- իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն,

- կանխել նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը,

- արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն):

- արգելել կողմնակի անձանց մուտքը,

- այցելուներին տրամադրել մեկանգամյա անցագրային թերթիկներ ընդունողի բանավոր թույլտվությամբ,

- մուտքը թույլատրել աշխատակիցների և ունկնդիրների համար կազմված անվանացուցակով,

- իրականացնել Պատվիրատուի կողմից սահմանված այլ անվտանգության և պահակային կանոններ,

- բակ թույլատրել մուտք գործել միայն աշխատակիցների ավտոմեքենաներին,

- ամենօրյա շրջայց կատարել շենքի ներսում՝ աշխատանքի ավարտից հետո,

- ապահովել անվտանգության աշխատակցի առկայությունը,

- ապահովել գիշերային հերթափոխի աշխատանքների և օպերատիվ իրավիճակի վերահսկումը /ներառյալ տեսահսկման համակարգերի միջոցով/:

Կատարողը պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով հասցվել է Պատվիրատուին:

Այս բոլոր պայմանները պարտադիր են, ներառված են պայմանագրի գնի մեջ և իրականացվում են Կատարողի կողմից:»

«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 16.12.2020թ. ներկայացված բողոքով պնդել է, որ, ըստ վերը նշված բնութագրի, ստացվում է, որ ընտրված մասնակից ճանաչվելու և պահնորդական ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու դեպքում Ընկերությունը պետք է նշված ծառայություններն իրականացնի Կոմիտասի 49/2 շենքի տարածքում տեղակայված մեկ այլ կազմակերպության համար, ընդ որում, վերը նշված հանգամանքի վերաբերյալ հրավերի տեխնիկական բնութագրում որևէ նշում առկա չէ:

Ըստ այդմ՝ Ընկերությունը եզրակացնում է, որ հրավերի տեխնիկական բնութագրում ներկայացված գնման առարկայի հատկանիշները բավարար ճշտությամբ սահմանված չեն՝ որպես կատարողականի կամ գործառութային նկարագրեր, ինչը հնարավորություն չի տալիս մասնակիցներին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Հարկ է նշել, որ թեև Բողոքում նշված՝ ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեում գտնվող մասնաշենքում տեղեկայված է մեկ այլ պետական մարմին ևս, սակայն վերջինիս տարածքում պահնորդական ծառայություններ չեն մատուցվելու: Սենդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և պետական այլ մարմնի աշխատակիցները տարածք մուտք են գործում տարբեր անցակետերով՝ պտտադռնակի միջոցով:

Միաժամանակ, Սենդամթերքի անվտանգության տեսչական մարմնի աշխատակիցները կամ այլ անձինք ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեում գտնվող մասնաշենք մուտք են գործում անցագրերի միջոցով, որոնք լինում են ծառայողական և մեկանգամյա մուտքի համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով

փարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Այսպիսով, համադրելով վերը նշված փաստական հանգամանքները և վկայակոչված իրավանորմերը՝ կարող ենք փաստել, որ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների հաշվառմամբ, սպառիչ և հստակ նկարագրում է ձեռք բերվող ծառայության հատկանիշները, և չի պարունակում մրցակցության համար որևէ չհիմնավորված խոչընդոտ:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ի կողմից 16.12.2020թ. ներկայացված բողոքն անհիմն է, և ամբողջովին ենթակա է մերժման:»:

4. <u>Երրորդ անձ՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը 24.12.2020թ.–ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձի ներկայացուցիչը, ներկայանալով 24.12.2020թ.-ին հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին, բողոքի իրավական և փաստական հանգամանքներին:

5. <u>ԳԲՔԱ-LO-2020/125 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպվող սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի կարիքների համար՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պահնորդական ծառայություններ) ձեռքբերման նպատակով 14.12.2020թ.-ին հայտարարվել է «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 21.12.2020թ.-ին:

iii. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

«Անվտանգության ծառայություններ՝ ք. Երևան, Կոմիտասի 49/2 շենքի համար (այսուհետ՝ տարածք)

ք. Երևան, Կոմիտասի 49/2 շենքի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1842.7 քմ:

Անհրաժեշտ է իրականացնել շուրջօրյա պահնորդական ծառայություն առանց հանգստյան և տոնական օրերի: Աշխատակիցները պետք է ունենան ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորում և ապահովված լինեն ծառայությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով: Պահպանության ենթակա պահակակետի աշխատակիցները (Պահնորդները) պետք է ապահովված լինեն հետևյալ միջոցներով՝ ձեռքի դյուրակիր լապտեր, դեղատուփ, ռետինե մահակ, մետաղական ձեռնաշղթա, որոնց համար պետք է անցած լինեն համապատասխան դասընթացներ և ունենան վկայական: Կատարող ընկերությունը պարտավորվում է պահ¬¬պանության ենթակա բոլոր պահնորդներին ապահովել համապա¬տաս¬խան արտահագուստով (ամառ, աշուն-ձմեռ), որոնց վրա առկա է իր տարբերանշանը:

ք. Երևան, Կոմիտասի 49/2 շենքի տարածքի անվտանգության ծառայությունը պետք է իրականացվի 24 ժամյա ռեժիմով առնվազն 1 պահնորդի ներկայությունը պարտադիր է, ընդ որում՝

Իրականացնել հերթապահություն /ներառյալ տեսահսկման և համակարգերի միջոցով/,

- *իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն,*
- *կանխել նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը,*
- *արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն):*

- *Արգելել կողմնակի անձանց մուտքը,*
- *այցելուներին տրամադրել մեկանգամյա անցագրային թերթիկներ՝ ընդունողի բանավոր թույլտվությամբ,*
- *մուտքը թույլատրել աշխատակիցների և ունկնդիրների համար կազմված անվանացուցակով,*
- *իրականացնել Պատվիրատուի կողմից սահմանված այլ անվտանգության և պահակային կանոններ,*
- *բակ թույլատրել մուտք գործել միայն աշխատակիցների ավտոմեքենաներին,*
- *ամենօրյա շրջայց կատարել շենքի ներսում՝ աշխատանքի ավարտից հետո:*
- *ապահովել անվտանգության աշխատակցի առկայությունը,*
- *ապահովել գիշերային հերթափոխի աշխատանքների և օպերատիվ իրավիճակի վերահսկումը /ներառյալ տեսահսկման համակարգերի միջոցով/:*

Կատարողը պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով հասցվել է Պատվիրատուին:

Այս բոլոր պայմանները պարտադիր են, ներառված են պայմանագրի գնի մեջ և իրականացվում են Կատարողի կողմից:»:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 16.12.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝

կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Թիկնապահական և պահնորդական գործունեության հիմնական խնդիրներն են՝

1) ֆիզիկական անձանց (նրանց կողմից պայմանագրում նշված անձանց) կյանքի և առողջության պաշտպանության նպատակով թիկնապահական ծառայությունների մատուցումը.

2) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (նրանց կողմից պայմանագրում նշված անձանց) գույքի, գույքային իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության նպատակով պահնորդական ծառայությունների մատուցումը.

3) պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային սահմանված պայմանակարգերի ապահովումը:

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ թիկնապահական և պահնորդական գործունեությունն իրականացնելիս կարող են մատուցվել հետևյալ ծառայությունները.

1) ֆիզիկական անձի կյանքի և առողջության պաշտպանությունը հակաիրավական ոտնձգություններից (այդ թվում՝ զենքի օգտագործմամբ).

2) սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ և շարժական գույքի, տարածքի պահպանությունը.

3) պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը.

4) հատուկ կապի և տրանսպորտային միջոցների տրամադրումը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունը պայմանագրով նախատեսված

դեպքերում կարող է իրականացնել նաև հատուկ կապով և տրանսպորտային միջոցով սպասարկում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից կազմակերպվող սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի կարիքների համար՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պահնորդական ծառայություններ) ձեռքբերման նպատակով 14.12.2020թ.-ին հայտարարված «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում անվտանգության ապահովման ծառայությունների (պահնորդային ծառայությունների) ձեռքբերումը: Նույն հրավերով սահմանվել է նաև, որ ծառայությունները ձեռք են բերվում ք. Երևան, Կոմիտասի 49/2 շենքի համար, որի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1842.7 քմ:

ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1681-Ն որոշման 3-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ Երևան քաղաքի Կոմիտասի 49/2 հասցեում գտնվող մասնաշենքի 1-ին հարկի 233.4 քառ. մետր և 4-րդ ու 5-րդ հարկերի 1609.3 քառ. մետր մակերես ունեցող տարածքներն ամրացվել են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուի գույքի, գույքային իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության նպատակով պահնորդական ծառայությունների մատուցման շրջանակը նախատեսվել է Երևան քաղաքի Կոմիտասի 49/2 հասցեում գտնվող մասնաշենքի 1-ին հարկի 233.4 քառ. մետր և 4-րդ ու 5-րդ հարկերի 1609.3 քառ. մետր մակերես ունեցող տարածքում՝ ընդհանուր 1842.7 քառ. մետր (233.4 + 1609.3):

Ընդ որում, հարկ է փաստել, որ «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի իմաստից նույնպես բխում է, որ պահնորդական գործունեություն իրականացնող տենտեսվարող սուբյեկտն իր ծառայությունները կարող է իրականացնել միայն սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ և շարժական գույքի սահմաններում:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուի կողմից Հրավերում հստակ նկարագրվել են ծառայությունների մատուցման բնութագիրը՝ սահմանելով ծառայության կատարման վայրը, մասնավորապես, որ պահնորդական ծառայությունները պետք է իրականացվեն ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեում գտնվող

շենքի 1842.7 քմ մակերեսով տարածքում, բացառելով ընդհանրական կամ նշված հասցեում գտնվող գույքի ամբողջական տարածքի վերաբերյալ որևէ տարընկալում:

Անդրադառնալով Ընկերության կողմից բողոքի քննության ընթացքում 29.12.2020թ.-ին ներկայացրած բողոքի լրացման հիմքերին ու փաստարկներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ թեև ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեում գտնվող մասնաշենքում տեղեկայված է մեկ այլ պետական մարմին ևս, սակայն վերջինիս տարածքում պահնորդական ծառայություններ չեն մատուցվելու: Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և պետական այլ մարմնի աշխատակիցները տարածք մուտք են գործում տարբեր անցակետերով՝ պտտադռնակի միջոցով, որի առկայությունը հնարավորություն է տալիս ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան: Այլ կերպ ասած՝ պահնորդական ծառայություն իրականացնող ընկերությունը պատասխանատվություն կարող է կրել Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի համար նախատեսված անցակետից կողմնակի անձանց մուտքի (այցելուների մուտքի ելքի թույլտվության), նյութական արժեքների չարտոնված տեղաշարժի (ապրանքների և նյութական արժեքների դուրս բերման) և այլ՝ Ընթացակարգի Հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրում առկա պայմանների ոչ պատշաճ կատարման համար:

Ամբողջացնելով վերոգրյալները, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում առկա չէ, քանի որ այն օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է տվյալ գնումը, ինչպես նաև ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից կազմակերպվող սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի կարիքների համար՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պահնորդական ծառայություններ) ձեռքբերման նպատակով 14.12.2020թ.-ին հայտարարված «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրում առկա պայմանները, որպես գնման առարկայի հատկանիշներ, չեն զրկում մասնակցին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ են նկարագրում ձեռքբերվող ծառայության հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանություն: Բացի այդ նման բնութագրերն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքներն անհիմն են, իսկ Ընթացակարգի պահանջներն հիմնավոր են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում հայտարարված «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 16.12.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/125 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**